ԿԱՐԾԻՔ

Սուրեն Սարգսի Բաղինյանի՝ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված **«Պետական դավաճանության քննության մեթոդիկայի առանձնահատկությունները»** վերտառությամբ թեկնածուական ատենախոսության մասին / Մասնագիտությունը՝ ԺԲ.00.04 – **Դատական իրավունք** – (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն)

Սուրեն Բաղինյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է պետական դավաճանության քննության կրիմինալիստիկական մեթոդիկայի հիմնախնդիրներին: Ինչպես հեղինակն է արձանագրել, պետական դավաճանության, որպես պետության անվտանգության դեմ ուղղված ամենածանր հանցագործություններից մեկի քննության մեթոդական առանձնահատկությունների վերհանման, հետազոտման ու այդ կապակցությամբ գիտականորեն հիմնավորված առաջարկություններ ներկայացնելու անհրաժեշտությունն առաջին հերթին պայմանավորված է այդ հանցագործությունների արձանագրված աճով: Ինչպես ցույց են տալիս վիճակագրական տվյալները, պետական դավաճանության դեպքերի աճ վերջին տարիներին արձանագրվել է բազմաթիվ երկրներում: Ընդ որում ավելի խորքային ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ պետական դավաճանությունների դեպքերն աճում են հատկապես պետությունների՝ ռազմական գործողությունների մեջ գտնվելու կամ աշխարհաքաղաքական այնպիսի զարգացումների ժամանակ, երբ վերջիններս տարբեր գործոններով պայմանավորված հայտնվում են այլ պետությունների շահերի, հետաքրքրությունների կենտրոնում: Նկատի ունենալով տարածաշրջանային իրողությունները՝ պետական դավաճանության կրիմինալիստիկական բնութագրի վերհանումը, դրա բաղադրիչների վերլուծությունը, կատարման մեխանիզմի հնարավոր դրսևորումների դիտարկումն ու այս գործերով քննության մեթոդիկայի հստակեցումն առավել քան արդիական է:

Բացի այդ, գիտատեխնիկական առաջընթացն օրեցօր ավելի լայն հնարավորություններ է ստեղծում ի թիվս այլնի՝ հանցավոր գործունեության համար: Եվ նկատի ունենալով, որ պետական դավաճանության դեպքերի կուլիսներում, որպես կանոն, այլ պետությունների հատուկ ծառայությունների ակտիվ հետախուզական գործունեությունն է, հետևաբար գիտատեխնիկական նոր հնարավորությունները պետական ֆինանսավորմամբ և շատ ավելի պրոֆեսիոնալ կերպով են օգտագործվում հենց այս հանցագործությունների ժամանակ:

Պետական դավաճանության դեպքերի քանակական և որակական փոփոխությունների պայմաններում դրա քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերի համակողմանի վերլուծությունը արդիական է, հետևաբար **Սուրեն Բաղինյանի** հեղինակած «Պետական դավաճանության քննության մեթոդիկայի առանձնահատկությունները» վերտառությամբ ատենախոսական հետազոտությունն ունի զգալի գիտական և պրակտիկ հետաքրքրություն:

Պայմանավորված պետական դավաճանության դեպքերի ցածր ցուցանիշներով՝ դրա քրեաիրավական բնութագրի, քննության մեթոդական առանձնահատկությունների և կրիմինոլոգիական հիմնահարցերի հետազոտությունները այնքան էլ շատ չեն: Այս հանգամանքը մի կողմից ավելի է բարձրացնում կատարված հետազոտության անհրաժեշտությունն ու նշանակությունը, մյուս կողմից՝ վկայում դրա հետազոտությունն ստանձնելու հեղինակի համարձակության մասին: Քննարկված հարցերի վերաբերյալ հեղինակի եզրահանգումներն ու առաջարկները պարունակում են գիտական նորույթ, զգալի գիտական հետաքրքրություն են ներկայացնում, հիմնականում ինքնուրույն են, ունեն տեսական և գործնական կարևոր նշանակություն:

Հեղինակին հաջողվել է պատշաճ կերպով սահմանել հետազոտության մեթոդաբանությունը, ճիշտ ձևակերպել հետազոտության նպատակներն ու հասնել դրանց՝ հիմք ընդունելով նաև ճշգրտորեն նույնականացված և առանձնացված խնդիրները համախումբը:

Հետազոտության տեսական հիմքում են և՛ հայաստանյան, և՛ արտասահմանյան տեսաբանների գիտական աշխատությունները: Հեղինակի կողմից ուսումնասիրվել են մեծ ծավալի գիտական աղբյուրներ, որոնց նկատմամբ ցուցաբերվել է բազմակողմանի մոտեցում, դիտարկվել են հետազոտության առարկա խնդիրներին վերաբերող հակադիր մոտեցումները:

Աշխատանքի գիտական նորույթը արտահայտվում է նրանում, որ դրանում առաջին անգամ հայրենական դատավարագիտությունում համապարփակ վերլուծության է ենթարկվել պետական դավաճանության քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագիրը, վերլուծվել այդ հանցագործությունների քննության կրիմինալիստիկական առանձնահատկությունները: Գիտական նորույթն իր արտահայտությունն է գտել պաշտպանության ներկայացված դրույթներում, որոնցում հեղինակը շեշտադրել է պետական դավաճանության կրիմինալիստիկական բնութագրի բաղադրիչները: Գիտական նորույթը շարադրվել է՝ հիմքում ունենալով ինչպես տեսական աղբյուրներները, այնպես էլ գործնական նյութերը՝ պետական դավաճանության դեպքերի քննության առկա պրակտիկան:

Հետազոտության արդյունքների փորձարկումն իրականացվել է հեղինակի կողմից հրատարակված գիտական հոդվածներում, գիտաուսումնական միջոցառումների ժամանակ դրանց քննարկմամբ:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, դրանցում ընդգրկված 9 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

Հետազոտության առաջին գլուխը, ներկայացնելով պետական դավաճանության քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերը, այդ հանցագործության կատարման մեխանիզմի տիպային մոդելները, կազմում է հետազոտության հիմքը, որի հիման վրա հետագայում ներկայացվում են պետական դավաճանության դեպքերի քննության մեթոդական կոնկրետ առանձնահատկությունները:

Ըստ այդմ՝ աշխատանքի երկրորդ գլխում ատենախոսը ներկայացնում է պետական դավաճանության քննության ընթացքում պարզաբանման ենթակա հանգամանքները, պետական դավաճանության քննության պլանավորումն ըստ քննչական իրադրությունների և պետական դավաճանության դեպքերի քննության ընթացքում քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների փոխգործողության հիմքերն ու տեխնոլոգիան:

Ատենախոսության երրորդ գլխում ատենախոսը հետազոտության առարկա է դարձրել պետական դավաճանության քննության տակտիկատեխնոլոգիական առանձնահատկությունները, այդ թվում՝ քննչական գործողությունների կատարման տակտիկական առանձնահատկությունները, գաղտնի քննչական գործողությունների կատարման տեխնոլոգիան և այս հանցագործությունների քննության ընթացքում հատուկ գիտելիքների կիրառման տեխնոլոգիական առանձնահատկությունները:

Ատենախոսության կառուցվածքը համապատասխանում է թեմային, դրա նպատակներին և խնդիրներին: Ատենախոսության առանձին բաղադրիչները փոխկապակցված են միմյանց հետ, բնականորեն շարունակում և փոխլրացնում են միմյանց: Ատենախոսության **սեղմագիրն** արտացոլում է դրա հիմնական բովանդակությունը: Հեղինակի գիտական հոդվածները, իրենց հերթին, արտացոլում են հիմնական դրույթները և եզրահանգումները:

Աշխատանքի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ այն կատարված է պատշաճ մակարդակով, ներկայացվող առաջարկությունները հիմնականում գիտականորեն հիմնավորված և ընդունելի են: Չնայած դրան՝ ատենախոսության վերաբերյալ առկա են նաև առանձին դիտողություններ.

Այսպես.

1. Պաշտպանության ներկայացվող դրույթների մի մասը ատենախոսության մեջ ձևակերպված են ոչ թե որպես պաշտպանվող դրույթներ՝ պնդումներ, եզրահանգումներ, առաջարկություններ, այլ շարադրանք այն մասին, թե ինչ է հետազոտվել աշխատանքի շրջանակներում: Այլ կերպ ասած՝ դրանցում երբեմն ոչ թե ձևակերպվել է գիտական նորույթը, այլ համառոտագրվել է դրա վերաբերյալ ուսումնասիրությունը: Օրինակ, պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթի շրջանակում բառացիորեն նշվում է. «*Պետական դավաճանության հանցակազմի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթներով առանձնահատուկ նշանակություն ունի այս հանցակազմի հատկանիշների շրջանակներում պարզաբանման ենթակա հագամանքների որոշակիացումը և դրանց պարզաբանմանն ուղղված ակտիվ գործողությունների ձեռնարկումը: Հետազոտության շրջանակներում մշակվել են պետական դավաճանության քննության դեպքում պարզաբանման ենթակա հանգամանքների դասակարգման չափանիշներ, որոնք ունեն ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն: Ըստ այդմ՝ պարզաբանման ենթակա հանգամանքների շրջանակը պայմանականորեն դասակարգվել է հիմնական և լրացուցիչ կամ պարտադիր և ֆակուլտատիվ տեսակների, ինչպես նաև առանձնացվել են դրանց երեք հիմնական (պարզ, բարդ, խառը) խմբեր՝ հիմք ընդունելով դրանց քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերի հիմնական տարրերը*»: Պաշտպանության ներկայացվող այս դրույթի շարադրանքը շարունակվում է ևս կես էջ՝ այն դեպքում, երբ դրանում կարող էր ավելի գիտականորեն, ավելի կատեգորիկ ու առանց հավելյալ պարզաբանումների ձևակերպվել պաշտպանության ներկայացվող իրական դրույթը՝ պետական դավաճանության դեպքերով պարզաբանման ենթակա հանգամանքների՝ հեղինակի առաջարկած շրջանակն ու դասակարգումը:

2. Պաշտպանության ներկայացվող երկրորդ դրույթի շրջանակներում հեղինակը նշում է, որ պետական դավաճանության քրեաիրավական և կիրմինալիստիկական բնութագրի համադրումը թույլ է տալիս վեր հանել դրանց կատարման մեխանիզմի առանձնահատկությունները և փաստում է, որ հետազոտության շրջանակներում մշակվել են պետական դատավաճանության մեխանիզմի տիպային հինգ մոդելներ: Դարձյալ պաշտպանության ներկայացվող դրույթի շրջանակում հղում անելով հետազոտությանը և պատմելով, որ առանձնացրել է քննարկվող հանցագործության կատարման մեխանզիմի մոդելները՝ ատենախոսը ցավոք այդ մոդելների ձևակերպումները որպես պաշտպանության ներկայացվող դրույթ չի առանձնացնում այն դեպքում, երբ գիտական նորույթը հենց այդ մոդելների առանձնացումն է և դա հետազոտության իրական արժեքավոր արդյունքներից մեկն է: Ընդ որում, այսպիսի մոտեցման արդյունքում տուժել է հենց աշխատանքի գիտական

և զուտ կիրառական արժեքը, քանի որ, օրինակ, դրա սեղմագիրն ուսումնասիրողը կարող է լավագույն դեպքում պարզել, որ հեղինակը պետական դավաճանության մեխանիզմի մոդելներ առանձնացրել է, բայց թե դրանք ի՞նչ մոդելներ են, իմանալ չի կարող:

3. Հետազոտությունն անհրաժեշտաբար սկսելով պետական դավաճանության դեպքերի քրեաիրավական բնութագրի ներկայացմամբ և վերլուծությամբ՝ ցավոք ատենախոսը չի ամբողջացրել այն: Մասնավորապես, հանցակազմի քրեաիրավական բնութագրին նվիրված առաջին գլխի առաջին պարագրաֆում հնարավոր չէ գտնել հեղինակի մանրամասն, գիտական մեկնաբանությունները հանցակազմի օբյեկտիվ կողմի այնպիսի հատկանիշի վերաբերյալ, ինչպիսին թշնամական գործունեություն իրականացնելու համար այլ օգնություն ցույց տալն է: Ընդ որում՝ հանցկազմի քրեաիրավական բնութագիրը ներկայացնելիս ատենախոսը վրիպել է նաև խիստ հայեցակարգային մի հարցի վերաբերյալ դատողություն անելիս: Մասնավորապես, ատենախոսը հետազոտության շրջանակներում խոսում է *«պետական դավաճանության մեղքի դիտավորյալ ձև»-ի* մասին, այնուհետև որպես հիմնավորում բերում «դրույթը», համաձայն որի *«մեղք պետք է համարել անձի հոգեբանական վերաբերմունքը կոնկրետ հանցավոր գործողության (անգործության) կատարման փաստի նկատմամբ»* այն դեպքում, երբ ՀՀ քրեական օրենսգիրքը հրաժարվել է մեղքի հոգեբանական հայեցակարգից, որդեգրել դրա նորմատիվիստական հայեցակարգը և մեղքն, ըստ գործող օրենսգրքի, արարքի նկատմամբ անձի հոգեբանական վերաբերմունքը չէ, մեղքը արարքի հակահիրավականությունը գիտակցելն է կամ այն գիտակցելու կարողությունը:

4. Ատենախոսության հեղինակն առաջարկում է պետական դավաճանության հանցակազմը սահմանող նորմի դիսպոզիցիայում սահմանել, որ *«թշնամու կողմն անցնելը սույն հոդվածի իմաստով օտարերկրա պետության, միջազգային կազմակերպության զինված ուժերի կազմում Հայաստանի Հանրապետության դեմ զինված հակամարտությունում կամ ռազմական գործողությունում կամ ռազմական տեխնիկայի և զենքի գործադրմամբ այլ գործողություններում անձի մասնակցությունն է», քանի որ օրենսդրորեն սահմանված չէ թշնամի հասկացությունը»:*

Այս առաջարկությունը մեր համոզմամբ երկու խնդիր ունի, որոնց կապակցությամբ անհրաժեշտ է լսել հեղինակի պարզաբանումը: Բանն այն է, որ առաջարկված սահմանումը թշնամու կողմն անցնելը կապում է բացառապես ռազմական կամ դրան հավասարեցված գործողություններին հակառակ կողմից անձի մասնակցության հետ այն դեպքում, երբ տեսության մեջ ամրապնդված է և հեղինակն էլ աշխատանքում կարծեք թե համաձայնում է, որ թշնամու կողմն անցնելը միայն հօգուտ նրա ռազմական գործողություններին մասնակցելով չէ որ կարող է դրսևորվել: Եվ իրավամբ, քննարկվող կատեգորիայի այդպիսի

մեկնաբանությունը մեր համոզմամբ խիստ նեղացնում է այն գործողությունների շրջանակը, որոնք անձը կարող է կատարել հօգուտ թշնամու և ի վնաս իր քաղաքացիության պետության անվտանգության:

Երկրորդ խնդիրն այն է, որ ՌԴ քրեական օրենսգրքին համահունչ ներկայացված այդ առաջարկությունը բացատրելով նրանով, որ «թշնամի» հասկացությունը օրենսգրքով սահմանված չէ, հեղինակը դրանով այդուհանդերձ առաջարկում է ոչ թե «թշնամի» հասկացության, այլ թշնամու կողմն անցնելու ձևերի նեղ շրջանակ: Այնինչ, քննարկվող հանցագործության քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերի հստակեցման տեսանկյունից հատկապես կարևոր է հասկանալ, թե որն է թշնամի պետությունը և ինչու ոչ, միգուցե կարելի էր առաջարկել, որ պետական դավաճանություն պետք է համարվի ոչ թե թշնամու, այլ նույնիսկ ոչ թշնամու կողմն անցնելը՝ հօգուտ նրա և ի վնաս սեփական պետության կատարված ցանկացած գործությամբ:

5. Աշխատանքի ամենաարժեքավոր արդյունքներից մեկը՝ պետական դավաճանության կատարման մեխանիզմի տիպային մոդելների առանձնացումն է, որը մեր համոզմամբ իրականացվել է մինչ օրս Հայաստանի Հանրապետությունում այդ հանցագործության դրսևորումների հիման վրա: Բայց կարծում ենք՝ աշխատանքը գիտական և պրակտիկ տեսանկյունից կշահեր, եթե պետական դավաճանության մինչ օրս դրսևորված դեպքերը հիմք դառնային տիպային մոդելների շատ ավելի լայն շրջանակի մշակման՝ սահմանելով այդ դեպքերում քննության սկզբնական և հետագա փուլերի մեթոդական առանձնահատկությունները:

Ներկայացված նկատառումները չեն նսեմացնում կատարված աշխատանքի կարևորությունը, կասկածի տակ չեն դնում հետազոտության պատշաճությունը:

Վերոգրյալի հիման վրա հանգում եմ հետևության, որ.

1. Սուրեն Սարգսի Բաղինյանի «Պետական դավաճանության քննության մեթոդիկայի առանձնահատկությունները» վերտառությամբ ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.04.- Դատական իրավունք - (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, քրեական դատավարություն,. կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությանը և համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգով» սահմանված պահանջներին:

2. Ատենախոսության նյութերն ամբողջությամբ ներկայացված են հեղինակի հրապարակումներում և հայտնի են իրավաբանական լայն հանրությանը:

3. **Սուրեն Սարգսի Բաղինյանն** արժանի է ԺԲ.00.04 – «Դատական իրավունք» – (դատարանակազմություն, քաղաքացիական դատավարություն, վարչական դատավարություն, քրեական դատավարություն, կրիմինալիստիկա, դատական փորձաքննություն, փաստաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի՝ իր կողմից հայցվող գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Իրավաբանական գիտությունների թեկնածու
Գ. Ս. Բաղդասարյան

Իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ Գ. Ս. Բաղդասարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
Դեկանի տեղակալ
Աշոտ Պետրոսյան

12.06.2026 թ.